6.1 Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ (ծածկագիր՝ 63-2.2-24)

Սահմանված կարգով կազմակերպում է պետական բյուջեի նախագծի՝ Մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև Մարզի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների մշակման աշխատանքները և առաջարկություններ ներկայացնում Վարչության պետին: Սահմանված կարգով կազմակերպում է պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործման աշխատանքները:

Կազմակերպում է Մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպությունների եռամսյակային և տարեկան ֆինանսատնտեսագիտական մոնիտորինգի վերաբերյալ ցուցանիշների ցուցանիշների ճշգրտման, ամփոփման և ՀՀ կառավարության առնթեր պետական գույքի կառավարման վարչություն ներկայացնելու աշխատանքները: Կազմակերպում է ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտին վերաբերողՄարզպետի որոշումների, կարգադրությունների և աշխատակազմի ղեկավարի հրամանների նախագծերը կազմելու և դրանք ստորագրման ներկայացնելու աշխատանքները: Կազմակերպում է Մարզի համայնքների հաստատված բյուջեների ընդունման, ամփոփման և Մարզի ամփոփ բյուջեի կազմման աշխատանքները: Կազմակերպում է մարզի համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների կազմման, վերլուծման, ամփոփման և համապատասխան մարմիններ ներկայացնելու աշխատանքները: Ապահովում է Մարզպետարանում Սոցիալական փաթեթի ծառայությունից օգտվող աշխատողների սոցիալական փաթեթի հատկացման հետ կապված հաշվապահական հաշվառման գործընթացը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համարպահանջվում է.

- Բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն /էկանոմիկա/ և կառավարում /մենեջմենթ/ մասնագիտությունների գծով,
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<ա>> ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ,
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 01.03.2013թ.՝ ժամը 14.15-ին, Խորհրդի շենքում /ք. Երևան, Տերյան 89/: